

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը (ՇԽ) բաղկացած է 15 անդամներից: Շահառուների խորհուրդը կոչված է ապահովելու ՀՄՀ-Հայաստան ծրագրի և շահառու խմբերի միջև շարունակական կապը:

1.2

Քաղաքացիական հասարակությունից Կառավարման խորհուրդ (ԿԽ) պատվիրակված անդամները հինգն են, ովքեր քաղաքացիական հասարակության անունից մասնակցում են ծրագրի որոշումների կայացման գործընթացում:

1.3

ՀՄՀ-Հայաստանը լայնորեն տեղեկատվություն է տարածում ՇԽ/ԿԽ առաջիկա ընտրությունների վերաբերյալ՝ հայտարարություններ տեղադրելով ՀՄՀ-Հայաստանի կայքէջում, առնվազն երկու օրաթերթերում, էլեկտրոնային նամակներ ուղարկելով քաղաքացիական հասարակության ցանցերին, ինչպես նաև լայն հանրային տարածում ունեցող լրատվամիջոցներով:

1.4

Սույն կարգի անբաժանելի մաս կազմող մասնակցության հայտի (հավելված 2, կցվում է)՝ համաձայն հետաքրքրված կազմակերպությունները կարող են ընտրություններին մասնակցել որպես ընտրող և/կամ ՇԽ/ԿԽ անդամի թեկնածու:

1.5

ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ և ԿԽ անդամները ընտրվելու են և պաշտոնավարելու են ընտրվելու պահից մինչև ՀՄՀ-Հայաստան ծրագրի ավարտը՝ ներառյալ ՀՄՀ-Հայաստան Համաձայնագրի ավարտին հաջորդող ծրագրի փակման շրջանում:

1.6

ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ և ԿԽ անդամները առաջնորդվում է ՀՄՀ-Հայաստան Համաձայնագրով, Կառավարման Համաձայնագրով, ներառյալ ՇԽ և ԿԽ անդամների գործունեությանը վերաբերող ստորագրված իրականացման նամակներով:

1.7

ՀՄՀ-Հայաստանը մշակում և ՀՄՀ-Հայաստան ծրագրի՝ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի (այսուհետ՝ Լիազոր ներկայացուցիչ) հաստատման է ներկայացնում ՇԽ և ԿԽ անդամների ընտրությունների կարգը (այսուհետ՝ Կարգ) և վերջինիս հավելվածները՝ ներառյալ մասնակցության հայտը (կցվում է, հավելված 1) և քվեաթերթիկի ձևը (կցվում է, հավելված 2):

1.8

Լիազոր ներկայացուցչի կողմից հաստատված (ՀՄԿ նախնական հաստատումից հետո) ՇԽ և ԿԽ անդամների ընտրությունների կարգը վերջնական է:

1.9

Կարգի դրույթների առնչությամբ առաջացած տարաձայնությունների դեպքում, գերակայությունը տրվում է «Հազարամյակի մարտահրավեր» Համաձայնագրի և Կառավարման Համաձայնագրի համապատասխան դրույթներին՝ ներառյալ ՇԽ և ԿԽ անդամների գործունեությանը վերաբերող ստորագրված իրականացման նամակներին: